ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

<Տելեկոմ Արմենիա> ՓԲԸ կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների մասին 2021 թվականի հունվարի 20-ի N 113093935 պայմանագրի

ք. Գյումրի «14» 01 2022թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանի, ով գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Բաժանորդ), մի կողմից, և <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲԸ-ն, որը գործում է համաձայն իրեն տրամադրած գործունեության թիվ 60 լիցենզիայի այսուհետ՝ (Մատակարար),ի դեմս լիազորված անձ՝ Վ.Կարապետյանի մյուս կողմից, հիմք ընդունելով 2021 թվականի հունվարի 20-ին կնքված հեռախոսակապի ծառայությունների մատուցման N 113093935 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Սպառողին մատակարարել նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Սպառողը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Սույն համաձայնագիրը գործում է 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայության մատուցման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագիրը կնքվում է /1 էջ/ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16	ք. Երևան, Ազատության 24/1
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900211205027	Հ/Հ163004038879
ՀԿՀՀ 05507437	ՀԿՀՀ 02500052
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	